ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ/44815/02/21**
2025թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19» մայիսի 2025թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ
Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

քննարկելով ըստ Արամ Մանուկյանի դիմումի՝ Անդրանիկ Մանուկյանին անգործունակ ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դիմելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Արամ Մանուկյանը պահանջել է Անդրանիկ Մանուկյանին ճանաչել անգործունակ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Մազմանյանը 15.10.2021 թվականին որոշում է կայացրել նշված դիմումը

վարույթ ընդունելու և 14.12.2021 թվականին նախնական դատական նիստ հրավիրելու մասին:

Հետագայում՝ 26.06.2023 թվականին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Մազմանյանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշում է կայացրել գործն Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ պատճառաբանելով, որ այն վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ, քանի որ դիմող Արամ Մանուկյանը հաշվառված է և բնակվում է Արարատի մարզի Դարակերտ գյուղի Բարեկամության փողոցի թիվ 14 տուն հասցեում, նույն հասցեում հաշվառված է նաև Անդրանիկ Մանուկյանը, իսկ իրավասու մարմինն Արարատի մարզի Դարակերտ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինն է, որպիսի հասցեները չեն մտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատական տարածքի մեջ:

Գործն ստացվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ու բաշխվել դատավոր Լ. Մկրտչյանին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Մկրտչյանը, համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, 17.08.2023 թվականին որոշում է կայացրել «Գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին»՝ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 30.07.2020 և 24.08.2021 թվականներին տրված տեղեկանքների համաձայն՝ Անդրանիկ Մանուկյանը նույն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում «Անձի օրգանական խանգարում, օրգանական ծագման կեղծ պսիխոպատիա» ախտորոշմամբ գտնվում է բուժման մեջ, ու դիմումը ներկայացվել է այն հոգեբուժական կազմակերպության գտնվելու վայրի դատարան, որտեղ դիմումը դատարան ներկայացնելու պահին բուժման մեջ է գտնվել այն քաղաքացին, ում անգործունակ ճանաչելու մասին պահանջով դիմումը ներկայացվել է:

Թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանում ստացվել է 01.09.2023 թվականին:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի 07.09.2023 թվականի «Տարածքային ընդդատության վեճը լուծելու մասին» որոշմամբ թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործն ընդդատյա է համարվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 24.05.2024 թվականի վճռով Արամ Մանուկյանի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.10.2024 թվականի որոշմամբ Արամ Մանուկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 24.05.2024 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան նոր քննության:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան) 29.01.2025 թվականին որոշում է կայացրել թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործը վարույթ ընդունելու և 02.04.2025 թվականին նախնական դատական նիստ հրավիրելու մասին:

02.04.2025 թվականին Արամ Մանուկյանը ներկայացրել է թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործն ըստ տարածքային ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հանձնելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանը, 02.04.2025 թվականի «Գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին» որոշմամբ պատճառաբանելով, որ «*(…) հաշվի առնելով դատարանի մատչելիության սկզբունքը, անգործունակ ճանաչվող անձի՝ հիմնարար իրավունքներն ու շահերը, արդար դատաքննության իրավունքը և իրավասու դատարանի կողմից գործի քննության անհրաժեշտությունը, գտնում է, որ սույն գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ: Եվ, թեև քննվում է հատուկ վարույթի կարգով քաղաքացիական գործ, և դատավարական առումով առկա չէ պատասխանող, ով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25 հոդվածով սահմանված կարգով կարող է առարկել գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ, սակայն դատարանն արձանագրում է, որ նշված հոդվածը չի կարող սահմանափակել հատուկ վարույթի կարգով քննվող գործերով գործին մասնակցող անձանց իրավունքները և խեղաթյուրել ընդդատության կանոնների պահպանման բուն նպատակներն ու էությունը, քանի որ մարդու, մասնավորապես սույն դեպքում՝ անգործունակ ճանաչվող անձի, հիմնարար իրավունքներն ու շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան, և անգործունակ ճանաչվող անձը պետք է ունենա արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ներառյալ իրավասու դատարանի կողմից իր վերաբերյալ քննվող գործով կայացված դատական ակտ: Արդյունքում, դիմողի միջնորդությունը հիմնավոր է, ուստի թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործը պետք է ըստ ընդդատության հանձնել ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը*», թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործն ուղարկել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարանում գործն ստացվել է 21.04.2025 թվականին ու 22.04.2025 թվականին հանձնվել է նույն դատարանի դատավոր Գ. Կոստանյանին:

Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Կոստանյանը, համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, 28.04.2025 թվականին որոշում է կայացրել գործի տարածքային ընդդատությունը որոշելու համար թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատին ուղարկելու մասին հետևյալ պատճառաբանությամբ.

«Սույն դեպքում, դիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան է ներկայացվել 04.10.2021 թվականին, երբ անգործունակ ճանաչվող անձը գտնվել է ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում՝ ստացիոնար բուժման մեջ (հիմք՝ ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 24.08.2021թ. տրված թիվ 486/21 տեղեկանք), և դիմումը ներկայացվել է հոգեբուժական կազմակերպության գտնվելու վայրի դատարան: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի կողմից 07.09.2023թ. որոշմամբ ևս արձանագրվել է վերը նշված փաստը և սահմանվել է, որ գործը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ, ուստի թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին: Հաշվի առնելով ողջ վերոգրյալը՝ դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը վարույթ է ընդունվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) կողմից ընդդատության կանոնների պահպանմամբ, որպիսի փաստը արձանագրվել է նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի 07.09.2023թ. որոշմամբ, հետևաբար՝ նույն գործի նոր քննությունը ևս պետք է իրականացվի նույն՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից անգամ եթե գործի քննության ընթացքում այն ընդդատյա է դարձել այլ դատարանի: Ընդ որում, դատարանի համոզմամբ, սույն դեպքում կիրառելի չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումը»:

Թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել և դատական կազմին է հանձնվել 12.05.2025 թվականին:

Վճռաբեկ դատարանը, քննելով թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ ենթաբաժնում [ՀԱՏՈՒԿ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ] ներառված 235-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***դատարանը հատուկ վարույթներն իրականացնում է նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են նույն ենթաբաժնի դրույթներով***:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից բխում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու գործի վարույթը ևս ենթակա է իրականացման հատուկ վարույթի կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է այդ քաղաքացու հաշվառման վայրի առաջին ատյանի դատարան, իսկ եթե քաղաքացին բուժվում է հոգեբուժական կազմակերպությունում՝ հոգեբուժական կազմակերպության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան: Քաղաքացու դեմ, որը չունի հաշվառման վայր, դիմումը ներկայացվում է նրա հաշվառման կամ բնակության վերջին հայտնի վայրի կամ նրա գույքի գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ դատարանը հատուկ վարույթներն իրականացնում է նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, եթե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ ենթաբաժնի դրույթներով հատուկ կանոններ սահմանված չեն: Տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ ենթաբաժնի վերը նշված դրույթներով հատուկ կանոն է սահմանված այն մասին, որ եթե քաղաքացին բուժվում է հոգեբուժական կազմակերպությունում, ապա վերջինիս անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է հոգեբուժական կազմակերպության գտնվելու վայրի առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Վկայակոչված նորմի վերլուծությունից բխում է, որ դատարանը հայցադիմումը

(դիմումը) ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունած լինելու պարագայում, որպես ընդհանուր կանոն, չի կարող գործն ուղարկել ըստ տարածքային ընդդատության այլ դատարան, **եթե անգամ այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:**

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ընդդատության կանոնները վերաբերելի են հայցադիմումի (դիմումի) ներկայացմանը, դրանք այն կարգավորումներն են, որոնք հնարավորություն են տալիս որոշելու, թե կոնկրետ որ դատարանի իրավասության ներքո է գտնվում ներկայացված հայցադիմումի (դիմումի) քննությունը: ***Այսինքն՝ ընդդատության հարցը որոշվում է հայցադիմումի (դիմումի) հարուցման փուլում և միայն այս փուլում է հնարավոր արձանագրել ընդդատության կանոնների խախտմամբ հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու հանգամանքը:***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավորը ենթակայության հարցի որոշման համար գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վկայակոչված նորմերից հետևում է, որ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը համաձայն չլինելու դեպքում յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ ուղարկելու մասին՝ այդ որոշումն ուղարկելով գործին մասնակցող անձանց, որոնք այն ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում, կարող են գործի ենթակայության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը գործն ստանալու պահից՝ հնգօրյա

ժամկետում, որոշում է գործի տարածքային ընդդատությունը կամ ենթակայությունը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Սույն գործի փաստերի համաձայն՝ դիմելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Արամ Մանուկյանը պահանջել է Անդրանիկ Մանուկյանին ճանաչել անգործունակ:

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի 07.09.2023 թվականի «Տարածքային ընդդատության վեճը լուծելու մասին» որոշմամբ թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործն ընդդատյա է համարվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

Այսինքն՝ 07.09.2023 թվականի «Տարածքային ընդդատության վեճը լուծելու մասին» որոշմամբ արդեն իսկ արձանագրվել է, որ դիմումի հարուցման պահին Անդրանիկ Մանուկյանը գտնվել է ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում, <u>ուստիև դիմումը հարուցվել է իրավասու դատարանին և քաղաքացիական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին</u>:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 24.05.2024 թվականի վճռով Արամ Մանուկյանի դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.10.2024 թվականի որոշմամբ Արամ Մանուկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 24.05.2024 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է **<u>նույն դատարան</u>** նոր քննության:

Նման պայմաններում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դեռևս 07.09.2023 թվականի «Տարածքային ընդդատության վեճը լուծելու մասին» որոշմամբ իրավասու դատարան է համարվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործը բեկանումից հետո ևս ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը, ուստի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը պարտավոր էր շարունակել գործի քննությունը:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Վարդանյանի հետևությանն այն մասին, որ դիմող Արամ Մանուկյանի կողմից ներկայացված՝ *«(...) անգործունակ ճանաչվող անձ Անդրանիկ Մանուկյանը հաշվառված է և փաստացի, մշտապես բնակվել և բնակվում է*

Մասիս համայնքի Դարակերտ գյուղում, դիմողի տանը, և իրենք էլ են զարմացած, թե ինչու է այս գործը քննվում Երևանի դատարանում: Քանի որ իրենք դիմել են անգործունակ ճանաչելու պահանջով, իսկ անգործունակ ճանաչվող ճանաչվող անձը բնակվում է Դարակերտում, կարծում են և միջնորդում են, որ սույն գործը քննվի Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում» բովանդակությամբ միջնորդությունը հիմնավոր է, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հանգամանքները չէին կարող բավարար հիմք հանդիսանալ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին որոշում կայացնելու համար, քանի որ, ինչպես արդեն նշվեց վերը, գործն ըստ տարածքային ընդդատության հանձնելու համար անհրաժեշտ է, որ դիմումը վարույթ ընդունված լինի տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ, մինչդեռ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի 07.09.2023 թվականի որոշմամբ հաստատվել է, որ դիմումը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ:

Նման պարագայում եթե անգամ գործի քննության ընթացքում առաջացել են այնպիսի հանգամանքներ, որոնց արդյունքում գործի տարածքային ընդդատությունը կարող էր փոխվել, այնուամենայնիվ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասով, պարտավոր էր շարունակել գործի քննությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ եզրափակիչ դատական ակտի բեկանումից հետո գործը նոր քննության ուղարկվելու պարագայում դատարանները տվյալ գործը վարույթ ընդունելիս դատավարության տվյալ փուլում այլևս չպետք է գնահատման առարկա դարձնեն դրա տարածքային ընդդատության հարցը, քանի որ, ինչպես արդեն նշվեց վերը, հայցադիմումը (դիմումը) կարող է համարվել վարույթ ընդունված տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ միայն գործի հարուցման փուլում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործն ըստ Արամ Մանուկյանի դիմումի՝ Անդրանիկ Մանուկյանին անգործունակ ճանաչելու պահանջի մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործն ըստ Արամ Մանուկյանի դիմումի՝ Անդրանիկ Մանուկյանին անգործունակ ճանաչելու պահանջի մասին, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/44815/02/21 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող ***Ս. ՄԵՂՐՅԱՆ***

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ